ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 396 – Ա

«ՍԻՍԻԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ԵՎ «ԳՈՐԻՍԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ՝ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՒ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2022 թվականի ապրիլի 22-ի «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների մրցույթի, ընտրության (նշանակման) ընդհանուր կարգը և չափորոշիչները սահմանելու մասին» N 539-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 14-րդ, 15-րդ և 16-րդ կետերը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց» և «Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների՝ տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթն անցկացնելու համար հաստատել մրցութային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնաժողովի նախագահ նշանակել մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մերի Գանդալյանին:
3. Հանձնաժողովի քարտուղար նշանակել մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության անձնակազմի կառավարման բաժնի պետ Նոննա Բաղդասարյանին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ • ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ • ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ • ՍՅՈՒՆԻՔ • ՀՀ • ՍՅՈՒՆԻՔ •

ՀՀ Սյունիքի մարզպետ Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 24
ք. Կապան

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզպետի
2026թ. օգոստոսի 24-ի
N 396-Ա որոշման

ԿԱԶՄ

«Սիսիանի մանկապատանեկան մարզադպրոց» և «Գորիսի տարածքային մանկապատանեկան մարզադպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների գործադիր մարմինների՝ տնօրենների թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթի անցկացման հանձնաժողովի

Մերի Գանդալյան	Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Մարինե Աբգարյան	Ֆինանսական վարչության պետ
Գայանե Սարգսյան	Անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ
Արփինե Բաղդասարյան	Իրավաբանական բաժնի պետ
Թամարա Կարապետյան	Կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
Քրիստինե Հակոբյան	ՀՀ վարչապետի աշխատակազմի սոցիալական հարցերի վարչության գլխավոր մասնագետ
Արմենակ Դավթյան	«Դեպի լավ ապագա» ԵԿ ՀԿ անդամ

2026-08-24 17:59:08 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ